

Հարգելի դիմորդներ

Փաստաթղթերը հանձնելուց առաջ խնդրում ենք ուշադիր ընթերցել հետևյալ թերթիկը:

Խնդրում ենք ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ թերի լրացված կամ ոչ լիարժեք ներկայացված փաստաթղթերը չեն կարող դիտարկվել DAAD-ի կողմից: Փաստաթղթերի ամփոփիչ տարբերակները հարկավոր է ներկայացնել 3 օրինակից, առանց ամրակների, ըստ ստորև բերված հերթականության:

- Գրանցվել DAAD պորտալում, ընտրել համապատասխան կրթաթոշակային ծրագիրը, բեռնել և լրացնել առաջարկվող հարցաթերթիկը
- Հերթականությամբ վերբեռնել բոլոր պահանջվող փաստաթղթերը, հարցաթերթիկի հետ միասին
- Հարցաթերթիկը լրացնելուց և պահանջվող փաստաթղթերը վերբեռնելուց հետո սեղմել “ուղարկել” (send/senden) կոճակը:
- 48 ժամվա ընթացքում պորտալի միջոցով Դուք կստանաք Ձեր փաստաթղթերի ամփոփիչ տարբերակը (Application summary/ Bewerbungszusammenfassung):
- Տպեք այն երեք օրինակ և ներկայացրեք DAAD գրասենյակ:

Պահանջվող փաստաթղթերը վերբեռնեք հետևյալ հերթականությամբ

1. Լրացված հարցաթերթիկ (Application summary/ Bewerbungsformular)
2. Ինքնակենսագրություն/ CV
3. Հիմնավորագիր նամակ կամ որոշ ծրագրերի դեպքում հետազոտական աշխատանքի համառոտագիր: Հիմնավորագիր և ինքնակենսագրություն գրելու չափանիշները կարող եք գտնել DAAD ինտերնետային կայքում համապատասխան կետի տակ
4. Հրավեր գերմանացի պրոֆեսորի կողմից (միայն հետազոտական կրթաթոշակների և աստենախոսության պաշտպանության համար/մյուս բոլոր ծրագրերին սա չի վերաբերում)
5. Ընտրված կուրսերի կամ ուսումնական ծրագրերի վերաբերյալ տեղեկություն՝ համապատասխան DAAD հարցաթերթիկի վրա, յուրաքանչյուր համալսարանի համար առանձին, հարցաթերթիկի ձևը կարող եք նայել մեր ինտերնետային կայքում/ սա վերաբերում է միայն մագիստրոսական և ասպիրանտական կրթաթոշակներին և նախընտրելի է, որ ուսումնական վճարը ընտրված մասնագիտության չգերազանցի կիսամյակի համար 500 եվրոն: Նախընտրելի է նշել երկու կամ երեք տարբեր համասարաններ, որտեղ դիմորդը կցանական շարունակել կրթությունը/:
6. Հասունության վկայական / ատեստատ/ և դրա թարգմանությունը՝ թարգմանված լիցենզավորված թարգմանչի կողմից
7. Բուհական դիպլոմները (հավելվածներով) կամ ակադեմիական տեղեկանքները և դրանց համապատասխան թարգմանություններ՝ թարգմանված լիցենզավորված թարգմանչի կողմից:
8. Լեզվի իմացության վկայական, որը պահանջվում է նախընտրած բուհի կողմից (որոշ բուհեր պահանջում են և՛ գերմաներենի և՛ անգլերենի իմացություն): Եթե դիմելու պահին առկա չէ

անգլերեն կամ գերմաներեն լեզվի ճանաչված վկայական (անգլերենի իմացության համար – Toefl IBT, IELTS և ցերմաներևի իմացության համար – Test DaF, DSH), ապա դիմորդը կարող է մասնակցել DAAD-ի կողմից կազմակերպվող թեստերին (onDaf/onSet): Նշված թեստերը տեղի են ունենում փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետից մի քանի օր հետո: Մանրամասն տեղեկություններ թեստերի վերաբերյալ Դուք կարող եք ստանալ DAAD գրասենյակում: Թեստերի համար նախատեսված TAN կոդերը կտրամադրվեն գրասենյակի կողմից: Զննությունը DAAD-ի դիմորդների համար անվճար է:

9. Վկայականներ (եթե առկա են) / սեմինարներ, կոնֆերանսներ, բարեգործական գործունեություն, վերապատրաստում և այլն/

10. Բժշկական օրդինատորները պետք է ներկայացնեն տեղեկանք օրդինատուրայի կրթության վերաբերյալ / սա վերաբերում է միայն բժշկական կրթությանը/

11. Ամառային դասընթացներին դիմելու համար նույնպես պարտադիր է ներկայացնել տեղեկանք դիմորդի կարգավիճակի վերաբերյալ /բակալավր, մագիստր, օրդինատոր/

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. մասնագետ դասախոսի կողմից տրված երաշխավորագիր նամակը միակ փաստաթուղթն է, որը չի կարելի վերբեռնել DAAD պորտալ: Դա հատուկ ձևաթուղթ է, որը հարկավոր է ներբեռնել պորտալից (Request for letter of recommendation/ Gutachten anfordern բաժանմունքներից), տրամադրել այն մասնագետ-դասախոսին, որպիսի նա լրացնի այն, տպի երեք օրինակ, կնքի կամ ստորագրի դրանք և այնուհետև տեղադրելով փակ ծրարի մեջ վերադարձնի դիմորդին: Փակ ծրարը և փաստաթղթերի ամփոփիչ տարբերակը դիմորդը ներկայացնում է DAAD գրասենյակ: